կուշաբթի օր, մայիսի 26-ին, Արծրունու թատրոնում։ Սկիզբը 8 ժամին երեկոյեան։ Դասախօսութեան արդիւնքը լինելու է յօգուտ Վանի սովատանջների։ Դասախօսութիւնը բաղկացած է երկու մասերից։ Պրօգրամմայի հետ կը ծանօթացնենք մեր ընթերցողներին։ Գները հետեւեալներն են լինելու. Լօժաները 5 րուբլ (երկու ծածկած լօժաներից մի լօժա կարելի է կազմել երկուսի գնով 10 րուբլ), առաջին և երկրորդ կարգ բազկաթոռների 2 րուբլ, մնացածները 1 ր. 50 կ., բոլոր աթոռները 1 րուբլ։ Գալերէայի թէ առաջին և թէ հետեւեալ կարգերը 30 կօպէկ։ Տոմսակները կարելի է ստանալ Արծրունու թատրոնի կասայի մէջ և «Մշակի» խմբագրատանը։

—

Խօսում են թէ ֆրանսիական ընդհանուր հիւպատոս ԹԻՖԼԻՍՈՒՄ նշանակված է ոչ թէ Շարլ դէ-Կուտուլիի ազգական Լուի դէ-Կուտուլի, այլ նոյն ինքը Շարլ դէ-Կուտուլի «Temps» լրագրի այժմեան խմբագիրը, որ երկու տարի առաջ այցելելով Կովկասը, այնչափ համակրալից կերպով վերաբերվեց դէպի հայոց ազգութիւնը Կովկասից իր մի քանի տասնեակ գրած նամակների մէջ։ Շարլ դէ-Կուտուլի իր Թիֆլիս եղած ժամանակը մեծ ցանկութիւն էր յայտնում կրկին այցելել Կովկասը, նորան հանգամանքօրէն ուսումնասիրելու համար։ Երեւի պ. Կուտուլին աջողվում է իր մտդրութիւնը իրագործել իր այժմեան պաշտօնով Կովկասի մայրաքաղաքում։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մի հայ-կաթօլիկ, պ. Յակովբ Մէլիքեանց ուղարկել է մեզ 10 րուբլ, յօգուտ Վանի սովելոց, որ նա նուիրատւութեամբ հաւաքել է այդ քաղաքի հայ-կաթօլիկների մէջ։ Մէլիքեանց, Յարութիւն Ժախեանց, Խաչատուր Ալվարեանց, Կարապետ Ասլանեանց, Քերովբէ Տէր-Պօղոսեանց տուեցին իւրաքանչիւրը 1 րուբլ, Պօղոս Ժախեանց տուեց 1 ր. 50 կ., Յովհաննէս Քօսեանց, Աբրահամ Ճուլարտեանց, Կարապետ Քօսեանց, Կարապետ Քօսեանց (էրզրումցի), Մկրտիչ Քօսեանց տուեցին իւրաքանչիւրը 50 կ., Մկրտիչ Ճուլարդեանց 60 կ., Շէկօյեանց 40 կ., Յովհաննէս Մազմանեանց 30 կ.։ Ընդամէնը 10 ր. 30 կ.։ Փօստի ծախսը հանած 10 րուբլ։

—

Շատ անգամ օտար լեզուներից հայերէն լեզուով թարգմանողները միմեանց խանգարում են մին միւսի աշխատութիւնների մասին տեղեկութիւն չունենալով և վեր առնելով մի և նոյն գիրքը թարգմանելու համար։ Այդպիսով երկուսից մինի աշխատութիւնը, որ քիչ ուշանում է, շատ անգամ ապարդիւն է լինում։ Այդ առիթով մենք այս օրերս մի նամակ ստացանք Երևանից, օրիորդ Եղիսաբէթ Ալիխանեանցից։ Ահա նամակը. «Պարապելով ազատ ժամերս մի քանի գրական աշխատութիւններով, օրինակ թարգմանութիւններով, ես արդէն վերջացրած ունէի Հօֆմանի «Աբրահամ Լինկօլն, կամ գերիների ազատող» գրքի հայերէն թարգմանութիւնը, երբ կարդացի ձեր լրագրում որ մի ուրիշ անձն էլ թարգմանել է նոյն գիրքը հայերէն լեզուով։ Այդպիսով իմ աշխատութիւնս զուր անցաւ։ Որպէս զի նոյնը չը կրկնվի, հարկաւոր եմ համարում առաջուց յայտնել որ այժմ ձեռք եմ տուել Շմիտի «Ծիծեռնակի բունը» վերնագրով փոքրիկ գրքոյկի թարգմանութեանը որ Ս. Պետերբուրգի Ֆրէբէլեան ընկերութենից պրէմիայի է արժանացել։ Լաւ կը լինէր, որ ամեն մի անձն, որ մտադրում յանձն է առնում մի որ և է գիրք թարգմանելու, առաջուց յայտնէր իր դիտաւորութեան մասին, լրագրութեան միջոցով։»

—

Ստացանք ԴԵՐԲԵՆԴԻՑ, Աթանէս Պօղոսեանցից 8 րուբլ յօգուտ Վանի սովատանջների։

—

Շնորհակալութեամբ ստացանք մի նոր հատոր „Сборникъ Свѣдѣній о Кавказѣ“ ժողովածուի, որ պարունակում է իր մէջ 1876 թւին Թիֆլիսում կատարված միօրեան ժողովրդագրութեան արդիւնքը։ Այս գիրքը խմբագրել է պ. Ն. Կօրիակօվ։ Յոյս ունենք այդ գրքի մասին խօսելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

—

Թիւրքաց կառավարութիւնը ամենքից, մանաւանդ Ռուսաստանից պաշտպանութիւն գտաւ։ Ռուսաստանի համար անգլիական նաւատորմի Մարմարեան ծովի մէջ մնալը մի և նոյն էր, եթէ նա Սև ծովի մէջ մնար, մանաւանդ եթէ ի նկատի առնենք Բոսֆորի ամրոցների այժմեան դրութիւնը։ Բոսֆորի ամրոցները կարող են արգելել Սև ծովից Կ. Պօլիս անցնելը, բայց չեն կարող արգելել որ և է նաւատորմին մնալ այդ ծովը։

Անգլիացիներին չաջողվեցաւ կրկին անգամ մտնել Մարմարեան ծովը, բայց նրանք յոյս չը կորցրին այդ նպատակին հասնել. սկսեցին փորձեր անել Սև ծովի վրա ծովային կայարաններ ձեռք բերելու համար։ Այդ ձեռնարկութիւնը, որ Ռուսաստանի դէմ էր ուղղված, Թիւրքիայի համար աւելի էլ վտանգաւոր էր։ Դժուար չէ հասկանալ, որ անգլիական նաւերի ներկայութիւնը Սև ծովի մէջ կը շատացնէր նրանց նաւերի թիւը Բոսֆորի ջրերում։ Ներկայումս դաշնագրի համեմատ Անգլիան Թիւրքիայի ջրերում իրաւունք ունի մի քանի կայարանական նաւեր ունենալ. այդ իրաւունքից օգուտ քաղելով, Անգլիան անդադար նաւեր է ուղարկում նրանց փոխոխելու համար և այդպիսով Բոսֆորի ջրերի մէջ նա միշտ ունենում է երեք, չորս նաւեր, մինչդեռ միւս պետութիւնները ընդամէնը երկու երկու նաւ ունեն։ Եթէ Անգլիան իրաւունք ստանայ Սև ծովի վրա ծովային կայարանները ունենալու, Բոսֆորի ջրերում նրա նաւերի թիւը կաւելանայ։ Բիկօնսֆիլդի մինիստրութեան նախագծերը սպիտակ թելերով էին կարված։ Թիւրքիան մերժեց և չէր կարող չը մերժել, որովհետև Ռուսաստանը չէր համբերի անգլիական նաւերի ներկայութիւնը Սև ծովի վրա նոր կայարաններում։ Թիւրքիան մերժելով ծովային կայարանների խնդիրը, մերժեց նոյնպէս և Ալեքսանդրետտա նաւահանգստի գիծը։ Իսկ այդ նաւահանգիստը ձեռք բերելու համար Անգլիան բաւական շատ աշխատեց։

Այդպէս էր գործում Անգլիան և պատրաստվում էր Ռուսաստանի հետ ծովի վրա պատերազմել։ Ցամաքի վրա լինելու պատերազմի համար նա աւելի էլ ընդարձակ չափերով էր պատրաստվում։ Ինչպէս որ Կ. Պօլսի մէջ անգլիական դեսպանը, նոյնպէս էլ Թիւրքիայի միւս քաղաքներում Անգլիայի դիպլօմատիական գործակատարները ձգտում էին թուլացնել Ռուսաստանի նշանակութիւնը, ձգտում էին վարձկան զօրքերի համար տարրեր պատրաստել։ Առաջ մտածում էին քիւրդերի վրա հիմնվել, բայց երբ իմացան, որ քիւրդերը յուսալի տարր չեն կազմում, վճռեցին հայերին իրանց կողմը դարձնել։ Եւ ահա ըսկսվում է հայերին հովանաւորելու խօսքը, սկըսվում է կատակ խեղճ քրիստոնեայի հետ, որ ուժաթափ էր լինում քիւրդերի և թիւրքաց վարչութեան հարստահարութիւններից։ Մի և նոյն ժամանակ Անգլիան ամեն միջոցներ գործ էր դնում, որպէս զի հայերից դէպի Ռուսաստանը ունեցած համակրութիւնը անհետանայ։ Հասարակ հայ դասակարգի մեծամասնութիւնը չը հաւատաց անգլիացիներին, բայց բարձր դասակարգերը, մանաւանդ ծովեզրեայ քաղաքներում, խաբվեցան։ Հայերին շողոքորթելը շատ վատ ազդեց մահմետականների վրա, որոնք ասիական Թիւրքիայում չափազանց անբաւական են անգլիացիներից։ Վերև յիշվածներին Անգլիան հասնում էր անգլիական հիւպատոսների օգնութեամբ, որոնց թիւը չափազանց շատացաւ, որովհետև Հայաստանի և Քիւրդիստանի մէջ Անգլիան բազմաթիւ զինուորական գործակատարներ նշանակեց։ Այդպիսով զինուորական անձինք անգլիական հիւպատոսների պաշտօններ են վարում հետեւեալ տեղերում. պ. Վիլսոն Սիվասի մէջ, կապիտան Կիդինըր (գնդապետ Վիլսոնի իշխանութեան տակ) Կաստամունի մէջ, գնդապետ Տրօտտեր Դիարբեքիրի մէջ, կապիտան Էվերստ Էրզրումի մէջ, կապիտան Կլէտօն Վանի մէջ, գնդապետ Չերմսայտ Չէյթունի մէջ, կապիտան Կուպեր Մուշի մէջ և կապիտան Ստիւարտ Բիթլիսի մէջ։ Այս հաշւից երևում է, որ Կովկասին սահմանակից ամբողջ ասիական Թիւրքիան լի է անգլիական զինուորական գործակատարներով։ Հաստատ կարելի է ասել, որ բոլոր այդ պարոնները պատերազմական նպատակներով են նշանակված։ Գլխաւորապէս նրանց պարտականութիւնն է ուսումնասիրել երկիրը և քաղաքական հող պատրաստել ի նկատի ունենալով մի պատերազմ Ռուսաստանի հետ։ Երկիրը ուսումնասիրելու համար առժամանակ շատ քիչ գործ է կատարված, Յայտնի է, որ հետախուզութիւններ են արված Քիւրդիստանի, Ալաշկերտի, Կաստամունի վիլայեթի և Մուշի մէջ։ Բացի այդ Մուշի պլանը նկարված է։ Անգլիայի զինուորական գործակատարների քաղաքական գործունէութեանը չափազանց օգնում է Հայաստանի մէջ տիրապետող սովը։ Օգնական գումարների բաժանելը և առհասարակ սովատանջների մասին հոգալը միջոց է տալիս վերջիններիս անձանց հայերի առաջ մեծ նշանակութիւն ստանալ մանաւանդ, որ նրանք մեծ գումարներ ունեն իրանց ձեռքին։ Զինուորական հիւպատոսների նշանակելը, լօրդ Բիկօնսֆիլդի այդ հնարագիտութիւնը, այնպիսի մի միջոց է, որ կարող է շատ վատ հետևանքներ ունենալ, նրանց քաղաքական գործունէութիւնը կարող է այն աստիճանի հասնել, որ մոլեռանդները կը ջարդեն ոչ թէ միայն հայերին, այլ և հիւպատոսներին և նրանց մօտ ծառայողներին։ Վերջապէս Ռուսաստանի վերաբերութեամբ դա մի թշնամական միջոց է և Գլադստօնի մինիստրութիւնը պարտաւոր է դրա վրա հարկաւոր ուշադրութիւն դարձնել։

Բացի զինուորական հիւպատոսներից, ժանդարմերիա կազմող անգլիացի օֆիցերներն էլ Ռուսաստանին թշնամի տարրեր են պատրաստում։ Թէպէտ այդ անձինքը, աննշան բացառութեամբ, օրինակ Բէկեր-փաշայի բացառութեամբ, իրանց անձնական յատկութիւններով շատ ստոր են զինուորական հիւպատոսներից և այդ պատճառով Անգլիային մեծ օգուտ չեն կարող տալ, բայց այնուամենայնիւ դրանք էլ կարող են մի բան անել։ Պ. Լայարդ և Բէկեր-փաշա, անգլիական օֆիցերների հրամանատարութեան տակ ժանդարմերիա կազմելով, մտածում էին նշանաւոր հետևանքների հասնել։ Այդ միջոցով նրանք մտադիր էին անգլիացիների ձեռքին պահել հասարակական ապահովութիւնը, այսինքն այն գործը, որից զուրկ է Թիւրքիան և մի և նոյն ժամանակ ասիական Թիւրքիայում իրանց իշխանութեան տակ զինուորված մի ոյժ ունենալ։ Այդ ձեռնարկութիւնը չաջողվեցաւ և ներկայումս թիւրքաց կառավարութիւնը աշխատում է ազատվել ժանդարմերիա կազմող օֆիցերներից և աջողութեամբ հասնում է իր նպատակին, նրանց ռոճիկները չը տալով։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 10 մայիս 1880

Գիտէք որ Անգլիոյ մէջ ազատականք անցնելով իշխանութեան գլուխ դրդեցին Արեւելեան քրիստոնեայ ազգաց մէջ յոյժ մեծ յոյսեր։ Քրիստոնեայ ամենափոքրիկ հասարակութիւնք, ամենն ալ, ուղարկեցին առ Կլատսթօն երկար և ջերմագին ուղերձներ, որովք կը յայտնէին ոչ միայն իրենց խնդակցութիւնը անգլիացի օրուան գլուցագին յաղթութեան վրա, այլ և կը խնդրէին իրմէ որ զիրենք թուրք կառավարութենէն ազատէ։ Այս գաղափարն, այլ և այլ ձևերով, իրեն ամեն կողմէ կը յայտնուէր։ Ազատականք յայտարարած են քանիցս անգամ թէ իրենց աշխարհավարութեան նպատակը պիտի լինի պատրաստել քրիստոնեայ ազգերը մի օր անկախ լինելու, հիմկու հիմայ, իրենց self-government ինքնօրէնութիւն տալով, ընդ վեհապետութեամբ օսմանեան սուլթանին։ Այսպիսի մի յայտարարութիւն բնականաբար պիտի քաջալերէր քրիստոնեայներն և մենք ալ, հայերս, ոչ նուազ փառաւոր յոյսեր սկսանք յղանալ։ Որպէս զի հայկական խնդիրը չը մոռացուի, լաւ մշակուի և Անգլիոյ ամեն կուսակցութեանց կողմէ հաւասարապէս պաշտպանուի, հարկ կար որ մեր կողմէ մարդ երթար Լօնտրա, և նա տեսնէր կուսակցութեանց գլուխները, տեսնէր լրագրապետներն և նոցա տեղն ի տեղօք հասկցունէր Թուրքիոյ վիճակը և ոյժ տար այսպէս մեր ազգային խնդրոյն։ Մի այսպիսի ամենափափուկ պաշտօն կը պահանջէր մեծ տակտ, մեծ շրջահայեցութիւն և մեծ քաղաքականութիւն։ Վերջապէս երեք անձն Լօնտրա ուղևորվեցան։ Ամեն մին տարբեր տարբեր ճանապարհ բռնելով Պօլսէն հեռացան։ Ամենամեծ գաղտնիք պահուած է այս «mission»-ին վրա։ Այս պատգամաւորութիւն որչափ նշանակութիւն ունի, ամեն ոք խոկոյն կըմբռնէ։ Անցեալ անգամուան պէս կղերական չեն, մի հանգամանք որ շատ նպաստաւոր չէր հայոց, այժմ աշխարհական են, որով բուն ժողովուրդը կը ներկայացնեն։ Մինը իր ճարտարութեամբ անտարակոյս կցերէ աւելի գործ կրնայ ընել։ Չեմ կարենար ուրախութիւնս ձեզ յայտնել, երբ դիւանապետը այս լուրը մեզ տուաւ. առաջին գաղափարս եղաւ վար իջնել և խկոյն ձեզ գրել։ Թէպէտ և մէկ երկու շաբաթէն այս բանն ամեն տեղ պիտի գիտցուի, սակայն չէնք ցանկար որ գոնէ այժմ իմացուի։ Դուք եթէ կուզէք այս լուրը տուէք առանց անունները յայտնելու։ Այս պատգամաւորութեան համար աչագին ծախք պէտք է, և մեր մի քանի հարուստներն 3 տարիէ ի վեր այնքան են տալիս, որ մենք ալ երեսուն չունինք սորա նորա դիմելու։ Դժբաղդաբար պարոններն ալ հարուստ անձինք չեն. ինչ և է 700 ոսկի մօտ (7000 մէթ.) ժողովվեր է ասկէ, անկէ և այս պատգամաւորութիւնը ճանապարհ դրվեր է։

Շատերը ջանացեր են միշտ Միդհաթ փաշայի ձեռքով մի երեսփոխանական խորհրդարան հաստատել, և կը յուսային որ այս կառավարական դրութեամբ հայերն լաւ կառավարուելով քիչ ժամանակէն կը հարստանային և մեծ ազդեցութիւն ձեռք կը բերէին ամբողջ Ասիայի մէջ։ Բայց այն օրէն ի վեր որ հաստատ համոզուեցան թէ ոչ մի բարենորոգում հնար չէ իրագործել Թիւրքիայում, սկսան մեզ պէս մտածել թէ պէտք է աշխատել հայերը տակաւ առ տակաւ անջատել Թուրքերէն, այսօր, մի փոքր ազատութիւն, էգուց, աւելի մեծ և ապա ինքնավարութիւն ստանալով։ Ճշմարիտ, եթէ գիտենանք աշխատել, գործել, ամենևին դժար չէ մեր յոյսերը իրագործել. մէկ քիչ միայն զոհողութիւն, յարատեւութիւն և սէր ու միաբանութիւն պէտք է։

***

ՄԻ ԼՈՒՐ Կ. ՊՕԼՍԻՑ

—

Կ. Պօլսից հեռագրում են, մայիսի 9-ից Վիէննայի «Polit. Corresp.» լրագրին։ Տեղիս հայոց շրջաններում գրգռում են Լօնդօն հայոց պատգամաւորութիւն ուղարկելու խնդիրը։ Պատգամաւորութիւնը պէտք է դիմէ անգլիական կառավարութեանը, խնդրելով եռանդոտ կերպով, որ Բերլինի կօնգրէսի 61-որդ յօդուածը, որ վերաբերվում է Հայաստանի մէջ մտցնելի ռէֆօրմներին, անյապաղ իրագործվի։ Բայց որովհետև, ասում է լրագիրը, Կ. Պօլսի հայոց պատրիարք Ներսէսը ընդդէմ է այդ տեսակ պատգամաւորութեան, ուստի այդ խնդրի վերաբերութեամբ Կ. Պօլսի ազգային ժողովը պէտք է յայտնի իր վճիռը։

Ի հարկէ ամենքին կը զարմացնէ այն իրողութիւնը, որ Ներսէս սրբազանը ընդդէմ է Լօնդօն հայոց պատգամաւորութիւն ուղարկելու, բայց մենք կարծում ենք, որ պատրիարքը չէ կամենում իր վրա առնել գործի պատասխանատուութիւնը, որպէս պաշտօնական անձն և թողնում է այդ խնդրի վճիռը ազգային ժողովի պատասխանատուութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 21 մայիսի։ Թէհրանից հեռագրում են, որ Պարսկաստանը մերժեց Տեկինի հարցի մէջ խառնվել։ Հրաժարվեցաւ նոյնպէս Մերվէի թուրքմէններից մասնակցութեան ցոյցեր ընդունել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ